ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF THE REPUBLIC
OF ARMENIA
KHACHATUR ABOVYAN ARMENIAN STATE
PEDAGOGICAL UNIVERSITY

Email: info@aspu.am
Web: www.aspu.am

Հեռ/Tel.: 59-70-49
Fax.(3741) 59-70-01

Երևան-0010, Տիգրան Մեծի 17
Yerevan-0010, 17 Tigran Mets Ave.

N 22/08.1.6-960

23 օգոստոսի, 2024թ.

Տարոն Մաթևոսյան ԱՁ
(ՀՀ, ք. Վանաձոր Սևակի 47/12)
Էլ. փոստ herminea85@mail.ru
տնօրեն Տարոն Մաթևոսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

Հայտնում ենք, որ «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Գնորդ) և Տարոն Մաթևոսյան ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականի ապրիլի 8-ին կնքվել է ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-8 ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ միակողմանի /մասնակի՝ 14, 15 չափաբաժինների մասով/ լուծվում է:

Պայմանագրի Հավելված 1 տեխնիկական բնութագրի 14 /լվացքի փոշի ավտոմատ սպիտակ շորերի համար/ և 15 /լվացքի միջոց ավտոմատ գունավոր շորերի համար/ չափաբաժիններով սահմանվում է որ Վաճառողը պետք է մատակարարի «Ալպիս» և «Վեռա» ապրանքանիշի լվացքի փոշիները:

Հիմք ընդունելով հիմնադրամի տնտեսական ապրանքների համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Վ. Մշեցյանի 22.08.2024թ-ի զեկուցագիրը, մատակարարման պայմանագրի՝ 2. 1. 1, 2.1.7 կետերը, 2.1.7.1 կետի բ) պարբերությունը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը որոշում է կայացվել 2024 թվականի ապրիլի 8-ին կնքված ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/7-8 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը միակողմանի լուծել /մասնակի՝ 14, 15 չափաբաժինների մասով/:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2024 թվականի օգոստոսի 23-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամի 1510002308480100 հաշվեհամարին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի ապահովման 8000 (ութ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ **ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Ֆինանսատնտեսական, գնումների համակարգման և մատակարարման կենտրոնի գնումների համակարգող՝
Ս. Ավետիսյան, հեռ. +374 98 594912